ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԶՐՊԱՐՏԵԼՈՒ ԱՐԱՐՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

14.08.2018 16:11

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը մշակել է **«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**, որը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 11.08.2018թ. որոշմամբ հավանություն է տրվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին և որոշվել է Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

Նախագծով առաջարկվում է 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածը լրացնել 3-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ.
«3. Փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:»:

Միաժամանակ առաջարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի 1-ին մասը «հետաքննություն կատարող անձին» բառերից հետո լրացնել «փաստաբանին» բառը, իսկ «այլ ակտի կատարման» բառերից հետո՝ «փաստաբանի մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ» բառերը:

Նշված օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին շրջանում հաճախ են դարձել փաստաբաններին՝ իրենց մասնագիտական գործունեության ընթացքում վիրավորելու և զրպարտելու դեպքերը:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ միայն քաղաքացիաիրավական պատասխանատվությունն արդյունավետ միջոց չի հանդիսանում փաստաբանի արժանապատվությունը և գործարար համբավը պաշտպանելու համար: Այս տեսանկյունից, քրեական պատասխանատվություն նախատեսելը պրևենտիվ (կանխիչ) նշանակություն կունենա:

Ինչ վերաբերում է փաստաբանին զրպարտելու արարքը քրեականացնելու առաջարկին, ապա, նախ և առաջ, կարևոր է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածը՝ գործող խմբագրությամբ, որպես արդարադատության դեմ ուղղված հանցագործություն, արդեն իսկ քրեորեն հետապնդելի արարք է որակում դատախազին, քննիչին, հետաքննություն կատարող անձին կամ դատական ակտերի հարկադիր կատարողին զրպարտելը: Հետևաբար' նշված անձանց ցանկում փաստաբանին, որպես արդարադատության իրականացմանը նպաստող կարևոր դերակատարի, չներառելը որակում ենք որպես լուրջ բացթողում, որն անհրաժեշտ է լրացնել:

Հատկանշական է, որ նույն օրենսգրքով քրեական պատասխանատվություն է նախատեսվում նաև Մարդու իրավունքների պաշտպանին, կապված նրա լիազորությունների իրականացման հետ, վիրավորելու համար (հոդված՝ 332.2):

Փաստաբանին՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը և զրպարտելն ունի հանրային վտանգավորության բարձր աստիճան, քանի որ այն իր բացասական ազդեցությունն է ունենում ոչ միայն փաստաբանի անձի, այլ նաև վերջինիս կողմից իրականացվող մասնագիտական գործունեության արդյունքի վրա և հանդիսանում է վերջինիս վրա ճնշում գործադրելու և, հետևաբար, նրա մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու միջոց:

Նշված առաջարկի համար հիմք է հանդիսացել նաև եվրոպական և ԱՊՀ մի շարք երկրների (Օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն), ինչպես նաև ԱՄՆ փորձը:

ԲԵՌՆԵԼ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Առաջարկվող նորություններ

06.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ՝ ԻՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՎԻՐԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

07.08.2018ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱԱՀ-ՈՎ ՀԱՐԿԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼ

14.08.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻ ԵՎ ՁՐՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԸ ՔՆՆԵԼ ՀԱՏՈՒԿ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՐԳՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })